

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

ՄԱՀ ԱՀԱՐՈՆԻ

Զի՛ ահաւոր է, Գաբրիէլ, քոյդ սուսեր : —
Ծերն լնարոն ահա լերին ի բարձու
Յառեալ գողայ . Թէ եւ հոգին իւր առ Տէր
Մըտօք սլացեալ զմարմինն յերկիր թողուցու .
Լ՛յլ ընդ խըտրոց նոցին դու կաւ սըրաբաց
Տալ զմահու հարուած :

Եւ միտքն յածեալ բերին երբեմն ընդ եղեալ ,
Ըզտիս յիշէ զգեղազըւարթ մանկութեան ,
Եւ ըզբազուկն հըզօր եւ բարձր որ խնամեալ
Իբրեւ ըզմայր՝ զԽորայլեանն ազգ եհան
Ի բռնակալ աջաց , եւ ած ի յերկիր
Բարեօք լիալի :

Քանզի զցայդ սեամբն առաջնորդէր հրեղինաւ ,
Եւ ըզցերեկ յամպ եւ ի սուր պնդակազմ : —
Լսպառազէնք եւ կառք հասին գիշերաւ ,
Տալ ընդ տարերս եւ ընդ Բակոր պատերազմ .
Եւ ամպք անցին ի մէջ գընդիցն երկոցուն ,
Յահեղ մըթուլթիւն :

Դու , որ շանթից ես եւ ծովուց զօրութիւն ,
Լկնարկեցեր յամպարիշտ գունդս ատելեաց .
Ծովու ածեր եւ տիեզերքք յաղթութիւն .
Եւ ի հայելդ արեք փախեան ի յալեաց .
Մըրմըռագին գիզան կոհակքն իբրեւ բերդ՝
Յընտրելոց քոց երթ :

Մուտ եւ Մերեմ՝ այլ խըռնեցան ըզնորօք
Լ՛կիքն հերձեալք մեծաւ թընդամօք եւ սասաիւ ,
Որպէս բացան երբեմն որկորք հրաբորբօք՝
Զ՛յերկնից վանեալս առնուլ գիշերն ի յանտիւ :
Զէնք եւ զըրահք , արք եւ աստուածք ջարդեցան ,
Ի քում բարկութեան :

Եւ յանապաան էջ Տէր օրէնս տալ նոցին .
Հանթա եւ որոտս արձակէր լեառն հըրայրեաց .
Ի ծածկելոց փառաց տեսան ազգք գողացին :
Մին յԱտլանդեայ կալեալ երկրորդն ի Մասեաց ,
Զսւարթութիւնք կրկին , հարեալ զաշխարհ գըլըրդեն .
Զի խօսի Որ էն :

Լ՛զգք տիեզերք սարսին եւ Տէր բարբառի .
Բուռն է ձայնիւ քան ըզմարտիկս օ՛ն եւ օ՛ն ,
Որ խաղմարար մըրցին ի դաշտ Արիսի .
Անցեալ ի կէս լերին պաշտպան կայ Հարոն ,
Կարկառեալ զաջ մի հովանի իւր ալին՝
Զմիւսն յանմահ արփին :

Ո՛վ հրաշք . որ խոյս ի բռնակալն ետ աջոյ ,
Որ ի յուզմանց զերծաւ շանթից եւ ալեաց ,
Որ կաց խըտրոց ընդ իւր ազին ու Լստուածոյ՝
Ի յանդընդոց մահու փախչել ոչ կարաց .
Խոնարհեցոյ ըզպարանոցն առ սուսեր՝
Որ ըզմահ բերէր :

Յերկին թռիցոք յաստուածառաք ի հուր կառս ,
Յերկրի անյայտ լիցոք ի խիտ ի մայրիս ,
Ընդ բիւր անդունդս սահեալ անցոք անվընաս ,
Մարդ եմք , պարտիմք մահու երթալ ի գերիս :
Լ՛յլ . Մահ , մարմնոյ յաղթես , հոգւոյ արդարոյն՝
Տաս զանմահութիւն :

ԹՈՎՄԱՍ ԹԵՐԶԵԼՆ

ՍԶ . Ռափ . Վարժ .

Տերեւն Անտառի :

Անջատեալ քոյդ ի ցօղնոյն ,
Ո՛վ հէք տերեւ ազազուն ,
Ո՛ւր գընաս դու . — Զգիտեմ զայն .
Զկազինն մըրրիկն եհար
Որ ինձ նեցուկ էր միայն :
Ի շունչ առեալ անգագար
Զեփիւռ եւ կամ հիւսիսի
Ցարգ զիս յածէ հողմավար
Ի յանտառէն ի դաշտի ,
Եւ ի լերինս ի հովտոյն .
Եւ յոր վարիմս բոտ հողմոյն
Ըզհետն անահ ընթանամ .
Գընամ ուր գնայ ամենայն ,
Ուր գնայ տերեւըն վարդի ,
Ուր եւ տերեւըն սարգի :

ԱՌՆՈՒ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ենիչերինեւուն կոտորածը :

Լ՛սնիչերինեւուն կոտորածը () ամա-
նեան պատմութեան մէջ յիշատակաց
արժանի դէպքերէն մէկը կրնայ սե-
պուիլ , եւ Սուլդան Սահմուտ Բէ ձեռ-
քով եղած բարեկարգութեանց սկըզբ-
նաւորութիւն : Լ՛ս հռչակաւոր Լ՛սնի-
չերի (նոր չիւռաորութիւն) կոչուած բա-
նակը ժԴ դարուն () ըխան թագաւո-
րին ատենը հաստատուեցաւ , ու Սու-
րատ Լ՛սաջնոյն ժամանակը կարգի մը-
տաւ : Լ՛սչպէս Լ՛սգիպտոսի Սէմուքնե-
րը՝ ասանկ ալ Լ՛սնիչերեաց խուժմը նախ
() ամանեանց ձեռք գերի ընկած քրիս-
տոնեայ պատանիներէն կը ձեւանար .
բայց ետքը բուն Տաճկըներ ալ մտան
մէջերնին : Լ՛սնիչերինեւուն ինչպէս որ
թաշակը սովորականէն աւելի էր , անոր
համեմատ ալ նաեւ ազատութիւննին .
ասանկով շատերը ետեւէ կ'ըլլային նոյն